ԱՊԾԵՐՈՆԵԱՆ ԹԵՐԱԿՂԶԻՆ

եւ

ՌՈՒՍԱՑ ՆԱՒԹԸ

ԳԱԼՈՒՍՏ ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆԻ

(Շարունակութիւն [1])

II

Բաքուն, որ ապագայում մեծ քաղաք են գուշակում ռուսաց մեծութեան թշնամիները, սկսել է արդէն հողի տակից դուրս գալ։ Նոր քաղաքը չինուել է պարսկական հին քաղաքի կողքին։ Եւ իրաւ, նոր չինութիւնները սկզբում միայն մի քանի քայլ հեռու էին հին թաղերից, բայց նրանք արագութեամբ ընդարձակուեցին մինչ այն բլուրի ստորոտը, որ հիմքն էր կազմում անցեալ դարերի Բաքուին. յետոյ նրանք բռնեցին բլրի լանջերը, որին ամեն կողմից ծածկեցին։ Այժմ այն վիթխարի պարիսպները և ահագին դռները, որոնք պաշտպանում էին պարսկական մոնումենտները, քանդուած են արդէն, և ոչինչ չի կարող այլ ևս դանդաղացնել եւրոպական լուսաւորութեան մուտքը։ Շուտով խաների հին պալատը, խանի աղջկայ աշտարակը, Ֆաթմալի մզկիթը, այդ բոլորը կ'ընկնի, կ'անհետանայ, տեղի տալով սովորական փողոցներին և եւրոպական ոճով չինուած տներին, առանց արտիստական ճաշակով չինուած այն միատեսակ, բարձր, առողջ և կոմֆորտով տներին, որոնք կապուած չեն լինիլ ոչ մի յիշատակի հետ։ Շատ զեղեցիկ էր սակայն Հալի-բեն-Իբրահիմ խանի այդ պալատը, որը XV-րդ դարում նորան դարձրեց թէ փառահեղ պալատ և թէ մի ուժեղ ամրոց։ Ժայռի վրայ կանգնեցրած՝ նա երկար դիմացաւ

---

[1] Տե՛ս «Մուրճ» N 7—8.

թշնամիների շտուրմերին. լետոյ նա ընկաւ և նորա հետ այն պետութիւնը որի պատնէշն էր նա։ 1650 թուականին Շահ-Աբբաս II նորա աւերակների վրայ կանգնեցրեց այն պալատը, որ դեռ կայ և որ այսօր ճամբորդների հիացքն է բերում. ֆրանսիացի Շարդէնը սքանչանում էր արդէն այս քանդակների վրայ, որոնք երգել են տալիս բոցավառ հրաշալիքների մասին, այս մեծ ջլանալին դռան առաջ, որտեղից մտնում են «դիւանը», որ քիօշքի ձեով է սարքած, ջլանալին սիւներով և մի հիանալի պարսկական զմբէթով։ Միայն թէ այս անհամեմատելի գլուխ-գործոցները հանգիստ կերպով դիտելու համար՝ լաւ կը լինէր ականջներդ փակէք ուղեկցի պատմածներից և չը նայել քիօշքի մէջտեղը դրած սալաքարի վրայ։ Ամենասկեպտիքական այցելուներն անգամ զարհուրում են իմանալով որ այնտեղ մի գահլիճ կար, ուր թաթար և պարսիկ խաները դատաստան էին կտրում։ Թաթարների դատաստանը! բնաղդմամբ մարդուս աչքերը որոնում են տապարը և կոճղը. գոնէ այժմ, մէջտեղի սալաքարի տակ մնում է այն հորը, ուր գցում էին դատապարտուածներին։ Պատմում են թէ այդ հորը միանում էր ծովի հետ. այդ հորի մէջ նախ գցում էին գլուխը, լետոյ արիւնաշաղախ մարմինը. և դատաստանը վերջանում էր։

Հին մզկիթները շատ աւելի քիչ հետաքրքրական են. լիշենք սակայն սուրբ-Ֆաթմայինը, որ, ինչպէս երևում է, կարող է բերրի դարձնել անզաւակ կանանց և նրանց տալ ըստ ցանկութեան՝ տղայ կամ աղջիկ երեխաներ։ Կովկասում քիչ չեն սրա նման ուխտագնացութիւններ. Բայերն (Bayern) գերմանացու ասելով՝ մահմեդականներ թէ քրիստոնէաներ հայցում են սրբերից երեխաներ, մանաւանդ արու դաւակներ, որոնք աւելի են գնահատւում։ Ամենահռչակաւոր աղբիւրը կամ սրբարանը սուրբ Ցակոբինն է, Մասիս լերան վրայ. շատ են գովում նաև Քուռի աղբիւրները՝ Ախալցխայի վիճակում, և Արագածի մի քանի ժայռերը, ուր գնում են կանայք և փռւում են՝ ամենատարօրինակ դրութիւններ ընդունելով։ Սրբուհուն կամ սուրբին աղօթքը փչեցնելու համար գետնին փայտեր են տնկում, որոնք չրջապատւում են թղթի կտորներով կամ ճերմակեղէնի կտորտանքներով, այն ձեով, որ կոպիտ կերպով ներկայացնեն օրօրոցը։ Այդ օրօրոցներից մէկը Բայերը վերցրել և դրել է Թիֆլիսի մուզէյում։

Խանի աղջկայ աշտարակը երևի մի պարզ դիտարան էր. Ալեքսանդր Դիւման էր որ մի անգամ ևս ուզեց իրան բաւարարութիւն տալ՝ իւր ընթերցողներին կախարդելով մի իշխանուհու պատմութիւնով, որ մի բարձր աշտարակ է չինել տալիս միմիայն այն նպատակով, որ նրա բարձրութիւնից իրան վայր գցի։ Նրա համար չը պէտք է Բաքուն շատ զարմանալի լինէր. դեռ այսօր էլ այնտեղ ոչ թատրոն կայ, ոչ կոնցերտներ, ոչ կանաչեղէն, ոչ ջուր, ոչ բուսաբեր հող, որից այլ տեղերում միայն անապատներն են զուրկ։ Քաղաքում մի թաշկինակի մեծութեան պարտէզ չինելու համար՝ հարկաւոր է եղել հողը Աստրախանից բերել տալ։ Եւ Բաքուում

գրեթէ անձրև չի գալիս, այնպէս որ անձրևային տարեալ մակերևոյթը շատ շատ հասնում է 0,25 միլլիմետրի. Կասպեան ծովի գոլորշիներն ամբողջապէս քաշւում են դէպի Դաղստանի գագաթները. Ջուրն այնքան սակաւ է, նոյն իսկ անալին գործածութեան համար, որ լուրջ առաջարկութիւն է եղել Աստրախանից ջուր բերել սալ արկղներով, որոնց մէջ Բաքուի նաւթը տանում են Վոլգայի գետաբերանը.

Ալ ես քաղաքում ոչինչ չունենալով տեսնելու, բացի բաֆինադներից, որոնց մասին առիթ կ'ունենամ յետոյ խօսելու, երկու օրից յետ ես այն թողի, որ Ապշերոնն ուսումնասիրեմ. Պ. պ. Ծովեան (Ծովեանով) եղբայրները, որոնց արհեստանոցը Բաթումում արդիւնաբերում է օրական 4,000 նաւթի արկղ, շնորհ արին իմ կարդագրութեան ներքոյ դնելու մի ֆաէտոն. բացի դրանից նրանք ինձ երկու ուղեկիցներ տուին՝ մէկն ինձ ուղեցոյց լինելու, միւսը մեզ պաշտպանելու համար՝ մեր ճամբորդութեան գիշերային մասում.

Երբ եղանակը լաւ է, տաքութիւնը տանելի է և քամին բաւականաչափ մեղմ է, ճամբորդութիւնը բաւականին ախորժելի է նոյն իսկ կանչին և ուրախ տեսարաններին սովոր եւրոպացուն. Եւ իրօք, գետինը միատեսակ մոխրագոյն է կամ սպիտակ, կէս աւազ և կէս աղ. Հորիզոնի վրայ գործարանների բուխարիները կամաց կամաց անհետանում են ճանապարհի վրայ, իրարից հեռու ցրուած են պարսկական գիւղեր, Մեչէդի-Նգնա, Խիլի, որոնց գորգերը արդարացի կերպով հռչակուած են ամբողջ Արևելքում, և տալ գիւղեր, ուր պահպանուած են դեռ Խորասանի բոլոր սովորութիւնները. կանայք բանում են, տղամարդիկ ոչինչ չեն շինում և թողնում են թաթարներին (Թուրքեր?) գործարանների (բաֆինադների) գործը՝ Աստուծու ամբողջ օրը բարբաջելու համար և կամ լսելու այն հին հեքիաթները, որոնց նմուշները մենք ունինք «Հազար ու մի գիշեր»-ի մէջ.

Ամենավատ ճանապարհով, որ մերթ քարքարոտ և մերթ աւազոտ է, մերթ լուսահատացնելու չափ չոր և մերթ ծծուած նաւթով և կերոսինով, մենք հասնում ենք հռչակուած Կրակի (Ատեժկա) կամ Սուրախանէի դաշտը. Նոյնքան ամայի, որքան և Ապշերոնի մնացած տեղերը. Նա պահպանում է սակայն մագդէութեան անմահ վիշտակները և իւր նաւթի աղբիւրները, և իւր բնական կրակի բոցերը, որոնք թէ գեղեցիկ են գիշերուայ ստուերների մէջ և թէ օգտակար են հողի հարստութիւնները շահագործելու համար. Դեռ այսօր էլ, այդ վառարանների տեսարանը գիշեր ժամանակ ճամբորդին խորը զգացնել է տալիս. Դէհ այժմ փորձեցէք երևակայել Կովկասի առաջին բնակիչների կրօնական ոգեորութիւնը, նրանց հիացմունքը, նրանց սարսափը, նրանց հաւատի խոստովանութիւնը Ծայրագոյն էակի ամենակարողութեան համար, որին նրանք պաշտում էին Նորա գոյութեան վիթխարի արտայայտութիւնների գիմաց. Եթէ ներկայումս քիմիկոսը չափչտակում է, ինչ պէտք է լինէր Հոմերոսի ժամանակակիցների հաւատը

ու սարսափը։ Եւ ահա թէ ինչու Կրակի տաճարը կառուցեալ էր այս դաշտի վրայ, ուր դարերի ընթացքում դալիս էին բազմութեամբ Զրադաշտի աղանդաւորները։ Ամեն։ ինչ կ'ասէին նրանք այժմ, տեսնելով որ սրբազան կրակի քոցերը գործ են ածւում նաւթի մի գործարանի լուսաւորութեան համար և որ իրանց եռապատիկ սուրբ տաճարն իսկ՝ թաքցրած է և փակւած գործարանի նոյն իսկ շրջապարսպի մէջ!

Մինչ այժմ, գոնէ, Կոկորևի գործարանը ոտնակոխ չէր արել տաճարի պարիսպները. քայց որքան էլ փոքրիկ լինի սրբարանը, խանգարիչ համարւեց նա, և նրա կործանումն արդէն վճռւած բան է. թերևս այս ժամին այդ արդէն կատարւած է։ Սրբ ինձ թոյլ տրւեց այցելել այդքան պատկառելի մոնումենտը, առաջ ինձ անցկացրին մի նեղ կորիդորով, և ահա շուտով ես գտնւեցայ մի տարօրինակ տեսքով բակի մէջ. մէջտեղում քարձրանում է մի գմբէթ, որ պահում է չորս հաւասար անկիւնաւոր սիւներով, որոնց միջի խորշերը ճանապարհ էին տալիս բռնկւող գազին։ Այդպիսով ստացւում էին չորս բնական քոցեր։ Չորս երեսից մէկի վրայ ամրացրած է մի երկաթէ երեքժանի, միւսները ծածկւած են հնդկական արձանագրութիւններով։ Վերջապէս չորս սիւները միացրած են իրար հետ։ Չորս քայլով մտնում էք սրբարանը, որի մէջտեղում փորւած է մի ընդունարան քառանկիւնի ձևով։ Բակի շուրջը կան փոքրիկ խուցեր միանգամայն նոյն ձևի՝ մի գմբէթ, որի կենտրոնում մի զանգակ է կախ արած, չետոյ երկու ոտաչափ մի պատ. պատից դէնը, այլ կողմում, մի տեսակ տաճար է երեք աստիճաններով, քարաշէն, արձանագրութիւններով ծածկած և վերջապէս աշտանակներից տեսնւում է հողի բնական կրակը։ Շինութեան ընդհանրութիւնը կրում է որոշ կերպով հնդկական ճարտարապետութեան կնիքը։ Ռուսաց թագաւորի գալու ժամանակ 1888-ին՝ նորան նորոգեցին, և նա տեսաւ հին պաշտամունքը կատարելիս պարսի երեք քահանաների (մոգերի) ձեռքով, որոնք Հնդկաստանից էին եկել։ Ցաւալի է որ մոգերն արդէն անցեալ դարուց դէս սկսել են իրանց տաճարի մէջ ներմուծել Եւրոպայից եկած գունաւոր ծիծաղելի նկարներ, որոնց նոյնքան ջերմեռանդութեամբ պաշտում են հաւատացողները, որքան Զրադաշտի լաւիտենական կրակին են պաշտում. եթէ աստուածը չը տուժէ ոչինչ՝ տուրիստը չի կարող չապշել և չը զարմանալ։

Սուրխանէն իւր երկու հազար տարիների հուշակը միայն կրակապաշտ գերբների մօտ չէ որ կորցրել է. նրա գործարանական բարգաւաճումը նմանապէս սկսել է իջնել, լաղթելով Բալախանէի կողմից. և Կոկորևի գործարանը վերջինն է այդտեղ մնում, որպէս և առաջինն էր մի ժամանակ։ Զարսկական գիւղ Բիւլբիւլէ և նաւթի մի քանի բնական լճերը միակն են բաժանում այդ երկու միացող դաշտերը, և ահա շուտով հասնում ենք Կովկասի նաւթային արդիւնաբերութեան կենտրոնը։

Բալախանի բերրիութիւնը եղակի է աշխարհքում. 1833-ից դէս

տարեկան արտադրութիւնը 10,000 տոննից բարձրացել է մինչ 2,700,000 տոնն (մի տոննը=62 պուդ), շարունակ աճելով, մինչդեռ Պենսիլվանիայինը մնում է միևնոյնը. բացի դրանից, Հիւսիսային Ամերիկայի Միացեալ-Նահանգների նաւթի աղբիւրները տարածւում են մի միլիոն քառակուսի կիլոմետրի վրայ, մինչդեռ Կովկասում Ապշերոնեան թերակղզին ըմբռնում է ընդամենը հազիւ 2,000 քառակուսի կիլոմետր [1]), տալով գրեթէ կէսը այն քանակութեան, ինչ տալիս է Ամերիկան. Ի՞նչ կը լինի, երբ աւելի կատարելագործուած գործիքներով նաւթի շահագործութիւնը կը տարածւի Թուրքեստանի 500.000 քառակուսի կիլոմետր տարածութեան վրայ, Մուղանի և Դաղստանի վրայ, Կուբանի, Ղրիմի և Կովկասի ամբողջ լեռնաշղթայի վրայ [2]): Բալախանում բանող հորերն այնքան առատ են, որ մի քանիսը նրանցից մի քանի օրում տուել են հում նաւթ աւելի քան 16 միլիոն կիլոգրամ. հում նաւթի շաղրանի բարձրութիւնը հասնում է մինչ 80 կամ 90 մետր. ես ինքս ոտից ցոլուխ թրջուեցի նաւթի անձրեւով, որ բարեբաղդաբար նոյնքան անվնաս էր, որքան նա նուրբ էր։

Բալախանից հում նաւթի արդիւնաբերութիւնը տարածւում է աստիճանաբար դէպի Սաբունչիի բարձրաւանդակը. այժմ Սաբունչիից աւելի է արտադրում Բալլով հրւանդանը, որի առաւելութիւնն այն է, որ ծովի ափին է (Բաքուից 4 կիլոմետր հեռու), մինչդեռ Բալախանէն մօտաւորապէս 50 մետր լայնութիւն ունի։ Ապշիսով ամբողջ թերակղզին շահագործւում է բոլոր ուղղութիւններով՝ Բալախանէն հիւսիսում, Բալլովը հարաւում։ Ես տեսայ Բալլովում մի հոր, որ օրական միլիոնաւոր պուդ նաւթ

---

[1]) Ապշերոնեան թերակղզին, ասում է պ. Լուդվիգ Նոբել, չափում է մօտ 2,000 քառակուսի կիլոմետր (մի կիլոմետրը մի վերստից փոքր ինչ պակաս է, և հաւասար 1,400 սաժինի)։ Այդ տարածութիւնից շահագործւում է միայն 400 քառակուսի կիլոմետր։ 1832-ից մինչ 1880 թուականն այդ՝ համեմատապէս սակաւանափակ մասը տուել է 240 միլիոն պուդ նաւթ (որ նոյնն է թէ 3 միլիոն 850 հազար տոնն). եթէ այդ քանակութիւնը հաւասար կերպով սփռուելու լինենք ամբողջ թերակղզու վրայ, կը ստանանք 45 սանտիմետր հաստութիւն։ Դրանից պէտք է եզրակացնել որ այն՝ ինչ մեզ շատ է թւում, դեռ ոչինչ է՝ համեմատած Բաքուի նաւթային հողերի սակ ամբարած գանձերի հետ։

[2]) Մեզ համար անհասկանալի է, որ պ. Կիւլպենկեանը բաւականաչափ սառնասիրտ տոն չի բանեցնում Բաքուի և Ամերիկայի նաւթային հարստութիւնների համեմատական դնահատութեան մէջ։ Միշտ աշխատելով փրանսիական ամսագրի համար նշանակած և նրանում տպած յօդուածում աւելի մեծ նշանակութիւն տալ ռուսական նաւթին ի վնաս ամերիկեան նաւթի։ Քաղաքական շովինիզմը մի կողմ պէտք է խոստովանուել, որ չը նայած Բաքուի նաւթի արդէն համաշխարհային հռչակին, նրա տարեկան արտադրութիւնը Ամերիկայի նաւթի արտադրութեան կէսից էլ պակաս է. իսկ միւս կողմից դեռ ամենևին հաստատ չէ և հիմք էլ չկայ գոնէ մօտ ապագայի նկատմամբ դրական յոյսեր դնել պ. Կիւլպենկեանից յիշած Իռանեան միւս տեղերի վրայ։ Մանսեր. Խմբ.

է եղել արտադրելիս և որ իմ ժամանակ գնա տալիս էր 200,000 մինչ 300,000 պուդ. բնակիչները, որոնք վախեցած էին աւելի քան սքանչացած, վախենում էին մի նոր տեսակի հեղեղից և մանաւանդ հրդեհից, որ կարող էր մի քանի օրում ոչնչացնել այս բոլոր հարստութիւնները և բոլոր հարևան աղբիւրների գանձերը։ Եւ իրօք այդ ազէտը պատահեց մի քանի ամիս յետոյ։ Պարոն Թաղիեւը՝ սեպհականատէրը գիտութեան տարեգրերի մէջ այդ եղակի հորի, տեսաւ չագրանը խփելիս մինչ 250 ոտնաչափ բարձրութիւն, և աւազը գալիս հասնում է եղել մինչ Բաքուի փողոցները։ Դժբաղդաբար, հորի 18 ամսաւայ գոյութեան ընթացքում, նաւթի մեծագոյն մասը իզուր կորաւ։ Դրուժբալի հորից, որ անզուգական էր թւում (1883-ին), Թաղիեւի հորը գերազանցեց. և դեռ ով գիտէ թէ ինչ ապագայ է խոստանում այդ տարօրինակ թերակղզին։

Պարզ է որ սեպհականատէրերը չեն ուզում շատ այդպիսի հորեր ունենալ. նաւթը չէր կարող ժողոված լինել և կը կորչէր Կասպից ծովում. այն նաւթը, որ մնում է օգում, շուտով անպէտք է դառնում լուսաւորութեան համար, եթէ ոչ վառելու համար. և, ընդհանրապէս, ամեն մի հոր, որի զարկերը (չաղրանը) չեն կանոնաւորած, մնում է անօգուտ։ Փորձել են ուղղութիւն տուղ գործիքներ չինել. օրինակ հորերի վրայ կանգնեցնում են ապպէս կոչած վիշկաներ (вышка), որ կարող է սովորական զարկերը պահպանել 20 կամ 30 մետր բարձրութեան վրայ։ Բայց չը նայած բոլոր զգուշ միջոցներին, որ գործ են դրած վիշկաները չինելիս, զարկի ոյժը, կարծր ջրածուխների հարուածները, աւազի և գազերի բուռն շփումները շատ անգամ քանդում են բոլոր աշխատութիւնները։ Բալախանում ինձ ցոյց տուեցին երկաթէ երկու տախտակներ 10 սանտիմետր հաստութեամբ, որոնք շատ քիչ ժամանակում ծակծակուել էին աւազով։ Ամենից առաջ զատուող գազերն այնպիսի ջրածուխներ են (hidrocarbures), ինչպիսիք են գազերը ճահիճների ($C^2 H^4$), էթանի ($C^2 H^6$), պրոպանի ($C^3 H^8$), որոնց շոգիները շատ հեռուից լսում են և որոնք օդի թթուածնի հետ միասին կազմում են շատ վտանգաւոր բնաւորութիւն ունեցող պայթող խառնուրդներ։

Պէտք է նկատել, որ գազային արտադրութիւնները և հեղուկային զարկերն աւելի բուռն են լինում գարնանը, որովհետև ձմեռը նաւթի շահագործութիւնը դանդաղում է՝ գետային նաւագնացութեան ընդհատման պատճառով։ Որ այդ ստիպած դադարի ժամանակ նաւթը չը կորչի, սեպհականատէրերը շատ անգամ փակում են իրանց հորերը երկաթէ շատ հաստ տախտակներով, որ կ ա լ պ ա կ ն ե ր են կոչում և ամուր խողովակներով, որոնց միջոցով ըստ ցանկութեան կարելի է հեղուկը բաց թողնել։ Սակայն գետնի տակից լսում են խուլ և երկար ձայներ, երբեմն նաև պայթիւններ, որպէս թէ վառօդից. ահա հէնց այդ ժամանակ վիշկաները տատանուում են, վերքաշուում և երբեմն էլ ոյժով գետին գլորուում, մինչդեռ

գետինը տեղ տեղ փլչում է և ծածկում հորը, որ այդ բոլորի պատճառն էր եղել։

Այդքան խրատներ առանց արդիւնքի չեն անցնում, բայց էլի գործիքները դեռ հեռաւորապէս անգամ չեն հասել ամերիկականին։ Շահագործութեան եղանակներն ընդհանրապէս դեռ շատ պակասաւոր են. գործարանների խողովակները վատ են սարքած և դեռ էլի շատ նաւթ է կորչում։ Պարոն Մարլինը սնանկութեան մի զարմանալի դէպք է պատմում, որ պատահել է Բաքուում, ուր սնանկացածի հորը օրական միլիոնաւոր կիլոգրամ նաւթ էր տալիս. բանն այն է, որ հորը շատ շատ էր տալիս, որպէս զի կարելի լինէր նրանից մի կաթիլ ժողովել. և ահա այդպիսի մի հոր, որ Ամերիկայում հարստութիւն կը լինէր, Բաքուում սնանկութեան պատճառ է դառնում։ Ռուսաց մամուլը յաճախ բողոքել է մի սիստեմի պահպանման դէմ, որի շնորհիւ գտնւած նաւթի կէսը կորչում է և այդպիսով ազգային հարստութիւնը վատնւում։ Նոբէլ եղբայրները, որոնք ծաղումով շւեդացի են, գրեթէ միակն են, որ շատ էլ լեռ չեն մնացել Ամերիկայի գործարանատէրերից։ Միւս կողմից անհամաձայնութիւնը տիրապէս իշխում է նաւթահորերի սեպհականատէրերի մէջ, և սակաւ չեն այնպիսիները, որոնք կրակել են տալիս հարևանների հորերը կամ պարագաները։ Ցուսանք սակայն որ ժամանակը կ'անցյատացնի այս բոլոր ստւերները և որ շուտով Կովկասի նաւթը յաղթանակը կը տանէ, որպէս և արժանի է՝ Ասիայի և Պենսիլւանիայի իւր բոլոր մրցողների վրայ։

Այժմ ահա Բաքուի մի քանի հռչակաւոր հորերի պատմութիւնը. 1873 թւին, մի գերմանացի ինժեներ, որ վճռել էր աւելի խորը փորել Բալախանի մի հոր, որ սպառած էր երևում, 90 մետր խորութեան վրայ կորցրեց նաւթի հետքը. այդ խորութեան վրայ բղխում էին միայն բազմաքանակ գազեր։ 100 մետր խորութեան վրայ հանդիպեցին ժայռոտ գետնի, որ բարեբաղդաբար շատ չէր հաստ, այնպէս որ աշխատանքը շարունակելու համար բաւական էր միայն մի մարդ։ Երբ բոպէապէս դուրս էին բերում շաղափը (le trépan) դնելու համար, նաւթի մի թեթև զարկ երևաց, որին հետևեց մի զօրեղ գազային հոսանք՝ ստորերկրեայ պալթիւններով և երկրի տատանումով, և ապա նորից նաւթի զարկ յառաջացաւ։ Ինժեները հորի վրայ դրեց մի քանի սանտիմետրանոց հաստ կալպակ. բայց միևնոյն գիշերը նաւթն այնքան զօրեղ խփեց, որ կալպակը կոտրատւեց և հեռու դէն շպրտւեց, և ահա տեսան որ բարձրացաւ մի ահագին մուգ սիւն, որ քսան և չորս ժամում տալիս էր մօտ 2,800 հեկտոլիտր (մի հեկտոլիտրը=հարիւր լիտր). արտավիժումը տևեց երեսուն օր, բայց տիրանալ նրան անհնարին է եղել, և բոլոր նաւթը փչացել է։ Այդ առիթով նկատողութիւն արեցին, թէ որքան ուժեղ է նաւթի հարւածը, նոյնքան փոքր է նրա սպեցիֆիկական քաշը։

1877 թւին Օրբելեան եղբայրներն ունէին 66 մետր խորութեան մի

հոր, որի տրամագիծը (գիամետր) 27 սանտիմետր էր. տէրերը հորը ծածկել տուեցին մի չատ հաստ և ծանր կալպակով. բայց հեղուկն այնքան մեծ ուժով խփեց, որ, չը կարողանալով ծակել կալպակը, կողքերից դուրս վիժեց և կէս ժամում լքցրեց 2000 հեկտօլիտր պարունակութեամբ մի բեզերուար, որը լքցնելուց յետ նաւթը հոսեց դէպի դաշտերը։ Հորի օրական արտադրութիւնը գնահատուեց 50,000 հեկտօլիտր, իսկ ընդամենը մօտ 2 միլիոն հեկտօլիտր նաւթ կորաւ աւազների մէջ։ Ահա թէ ինչու սովորութիւն ընկաւ հորը չրջապատել քարէ չինութիւններով մինչ մի լայնի խորութիւն, որ նման դէպք չը կրկնուի։

Ցաճախ է պատահում, որ մի արտավիժող հոր մի քանի ամսից յետոյ դառնում է սովորական հոր. 1877-ին այդ պատահեց Միրզօեւ եղբայրներին պատկանող 110 մետր խորութեան մի հորի հետ, և որ, սկզբում տալով օրական 4,000 հեկտօլիտր, շարունակեց սովորական չափով եօթ տարուայ ընթացքում։ Նոյնպէս 1879-ին կասպեան ընկերութիւնը գնեց պ. Մնացականեանցի 2000 ֆրանկի համեստ գումարով մի հոր, որ օրական տալիս է եղել մօտ 27,000 հեկտօլիտր. և այդ հորը նուազացրեց իւր արտադրութիւնը միայն չորս ամիս յետոյ։ Միևնոյն ընկերութիւնը դրանից մի տարի առաջ ունեցել է մի հոր, որ տալիս էր 8,000 հեկտօլիտր։ Այդպէս արտավիժող հորերը միշտ աննպաստաւոր են. նաւթը կորչում է կամ ծախսում չատ էժան գնով, երբեմն մի տոնը մի ֆրանկով, իսկ հարևաններն էլ յաճախ ստացած վնասների համար վարձատրութիւն են պահանջում։

Հիւսիսային Ամերիկայի Միացեալ-Նահանգներում երբէք չի լինում այդպիսի դէպք, նախ որովհետև աղբիւրներն այնտեղ չատ աւելի քիչ են արտադրում. յայտնի է որ Դրուժբան միայն մի օրում նոյնքան էր արտավիժում, որքան Միացեալ-Նահանգների բոլոր 25,000 հորերը.—և երկրորդ, որովհետև ամերիկական չահագործութիւնը հրաչալի կերպով է կազմակերպուած։ Այնտեղ նաւթի ոչ մի կաթիլը չի կորչում. ջրածխացած գազերը գործ են ածւում մետաղագործութեան (մետալուրգիա) մէջ, մինչդեռ այն 100,000 խորանարդ (կուբական) մետր գազերը, որ ամեն օր գտնում են Բաքուի 500 հորերից, կորած են և ազատ թռչում են մթնոլորտի մէջ։ Ամերիկայում ամեն սեպհականատէր ունի ահագին աւազաններ, և իւր նաւթի աւելորդը նա կարող է ժամանակաւորապէս ամբարել դեռ աւելի էլ մեծ նաւթամբարների մէջ, որ չինել են առանձին ընկերութիւններ։ Այն խողովակները, որոնք միացնում են հորերն ընդհանուր նաւթամբարների հետ, կոչւում են pipe lines, և կոնցեսսիոներական ընկերութիւններն են՝ United pipe lines C° և Tide water pipe line C°։ Երբ մի հորատէր արդէն լքցրել է իւր աւազանը, նա կանչել է տալիս ընկերութեան ագենտին, որ որոշում է ամբարելու նաւթի քանակութիւնը և, մի վկայագիր տալով հորատիրոջ՝ այդ քանակութեամբ նաւթը հոսել է

տալիս դէպի ընդհանուր նաւթամբարը։ Վկայագիրն իրաւունք է տալիս նրա կրողին պահանջել նշանակուած քանակութիւնը, վճարելով ամբարելու ծախքը։ Այդ վկայագիրները (certificat) ծախւում են Նեու-Իորկի բորսայում և տեղիք են տալիս հաղիւ երևակայելի մեծութեան սպեկուլացիաների, քանի որ յաճախ մի միակ «Բորսայում» վաճառում են այդ վկայագիրներով 30—40 միլիոն հեկտոլիտր։ Այդ եղանակով հորատէրը երբէք ծանրաբեռնուած չի լինում իւր նաւթով և երբէք չի որոնում, ինչպէս այդ Բաքումն է, ազատուել նրանից ինչ գնով էլ որ լինի։ Օրինակ են բերում Բաքումի Օրբելով եղբայրներին, որոնք 1881 թուականներին մի հոր ունէին 160 մետր խորութեամբ և 30 սանտիմետր տրամագծով և որի փորելը մի քանի տարի էր տեւել։ Մի շաբաթում հորը արտավիժեց 180.000 նաւթ. տեսարանը հրաշալի էր, բայց նաւթային գործում մարդիկ չը գիտեն թէ ինչին են պէտք այդ տեսակի ջղային զգացմունքները։ Հեղեղից և կրակից սպառնացած հարևանները գանդատուեցին, և քանի որ հորը չէր կարող շահագործուել, Օրբելովները ստիպուեցին այրել։ Տխուր բան է խոստովանուել որ ամենախելացին հէնց այդ էր։ Մի ուրիշ վտանգ կայանում է նրանում, որ փորելը վերջացնելու րոպէից 3—4 ժամ շարունակ երբեմն քարեր են տեղում ներքևից, որոնք, եթէ դուրս չեն ձգւում, մնում են հորի մէջ, այնպէս որ հարկ է լինում նորից փորել։

Նոբէլ եղբայրները մի քանի հորեր են ունեցել, որոնք արժանի են որ դնուեն մեր վերը լիշած հորերի շարքում. բայց պէտք է խոստովանուել որ նրանք իրանց հորերը չատ ճարպիկութեամբ են շահագործում. պ. Մարլինը գնահատել է 35 միլիոն ֆրանկի այն նաւթը, որ 1883 թուականին արտավիժեց հռչակաւոր Դրուժբան, որ, Թաղիեւի վերը լիշատակուած հորից յետոյ, ամենայորդն է եղել և որի մի մասը կորաւ։ Այդ կորուստները քչացնելու համար պ. Մարլինը պահանջում է տէրութեան միջամտութիւնը և առաջարկում է բոլոր արտավիժող հորերը դնել նրա վերահսկողութեան ներքոյ. նրա ցանկացածն է որ այդ վերահսկողութիւնը միայն ժամանակաւոր լինի և վերացնի հէնց որ Նոբէլ եղբայրների նման գործարանատէրեր ընդունակ կը լինեն առանց վերահսկողութեան լաւ շահագործել արտավիժող հորերը։

Այն բոլորի համար ինչ վերաբերում է արտավիժող հորերին, մենք լղում ենք ընթերցողներին պ. Դուլիշամբարովի աշխատութիւններին և պ. Մարլինի գրքին՝ Յաւիտենական կրակի աշխարհի մասին (The region of the Eternel Fire)։ Ժամանակ է որ խօսենք սովորական հորերի մասին, որոնք աւելի քիչ գրաւիչ են աչքի համար, բայց աւելի օգտաւէտ են քան արտավիժող հորերը։ Սրանց չեն շահագործում ջրհաններով. ինչպէս Միացեալ Նահանգներում, գետնի աւազոտ լինելուն պատճառով, այլ բաւականանում են նրանով, որ դործ են ածում խողովակներ, որոնք կախած են երկար պարաններից, որոնք շարժւում են շոգիով. այդ խողովակների մի-

ջին ուժն է 300 մինչ 400 կիլոգրամ նաւթ։ Սովորական հորերը տնում են աւելի երկար քան միւսները, և նրանց արտադրութիւնն ահագին է, քանի որ նրանցից ստացւում է օրական մօտ 100,000 կիլոգրամ։

Կան հորեր, որոնք միաժամանակ նաև աղի ջուր են տալիս. այդ դէպքում փորելու բոլոր աշխատանքները կորած են լինում։ Նաւթի հետքերը, որ երևում են հորը քանդելիս՝ երբեմն խաբուսիկ են լինում. կամ պատահում է որ մի ձեռնարկող, չը գտնելով նաւթը, լուսահատած ծախում է հորը ուրիշին չատ ցածր գնով, իսկ առնողը՝ մի քանի մետր փորելով, գտնում է լորդահոս աղբիւր. դա Բալլովի հորի դէպքն է, ուր նա իրան սպանեց լսելով իւր լաջորդի լաւ բաղդը։ Ահա այդպէս է որ այնպիսի արկածներ, որոնց նմաններին վկայ են լինում Մոնակոի լաճախողները, կարող են կատարուել նաև ամենակարծր և ամենից քիչ աքանչացնող երկրում. ոսկին հոտ չունի նոյն իսկ ոչ Ապշերոնի թերակղզում, նաւթի օրհնած երկրում։

Արտավիժող և սովորական հորերից դուրս կան հորեր, որոնք ընդհատուող կամ փոփոխուող արտավիժումն ունին։ Փոխոխութիւններն առաջ են գալիս չատ կարճ միջոցներում։ Վերջապէս Բալլովի ծովածոցում գտել են երկու ստործովեայ աղբիւրներ, որոնք իրար չատ հարևան են. նրանք իրանց գոյութիւնը ղգացնել են տալիս չատ թոյլ եռումով։ Նրանց չահագործումը երևի չատ դժուար կը լինի և չի փորձած. նրանք ծառայում են միայն Կասպից ծովի մակերևոյթը լուսաւորելու, չնորհիւ այն այրուող գազերի, որ բղխում են նրանցից։ Այդ մի հրաչալի տեսարան է տեսնել ծովի մակերևոյթը ակոսող բոցերը, նման արուեստական հրավառութեան, որին Զրադաշտը կ'երկրպագէր և որին ապագայի արհեստը թերևս կը չահագործէ և կը կլանէ որպէս ամեն ուրիշ բան։

Ինձ մնում է աւելացնել փորելու և հորերը սարքելու մասին մի քանի տեխնիկական մանրամասներ, որոնց ճշտութիւնը ես գրեթէ ամեն անգամ ստուգել եմ։ Հորերի խորութիւնը չատ տարբեր է, և գրեթէ հաստատած է որ նաւթի այլ և այլ աղբիւրները իրարից բոլորովին անկախ են. օրինակ մի արտավիժող հորի կողքին փորում են 300 մետր խորութեամբ՝ և ոչինչ չեն գտնում. մի փոքր հեռու՝ 200 մետր բաւական են աղբիւր գտնելու համար։ Ամենամեծ (մաքսիմում) խորութիւնը Բալախանում 360 մետր է, ամենափոքրը՝ (մինիմում) 60 մետր [1]. այս մինիմումը

---

[1]) Ահա 1889 թուականի համար Բաքուի հորերի վիճակագրութիւնը.

Հորերի թիւը։	Խորութիւնը մետրով։	Տարեկան արտադրութիւնն գոնեը (տոնը 62½ գրոշ։	Ամբողջ արտադրութիւնը։
29	60-ից մինչ 105 մետր	4,212	122,256 տոնն։
54	105 » 160 »	6,792	366,768 »

գերազանցում է 15 տարի առաջ եղած հորերի խորութեան մաքսիմումին։ Դրանից եզրակացնում են թէ գերազանց հորերը սպառուած են. դա ճիշդ է, բայց ոչ անհանգստացնող, որովհետև Միացեալ-Նահանգներում նոցա միջին խորութիւնն է 500—600 մետր։ Բալաքովի հրւանդանում, ուր աւելի նոր են սկսել շահագործելը, հորերն աւելի քիչ են խոր։ Զարմանալի է, որ այդ խորութիւններից դուրս բերած հեղուկի ջերմութիւնը զգալի չափով բարձր չէ մթնոլորտի ջերմութիւնից [1]. այս երևոյթի մէջ պէտք է տեսնել հեղուկի մասսայի մէջ բռնուած գազերի գոլորշիների ցրտացնող ազդեցութիւնը։

Մի հոր փորելու համար հողը վերցնում են մինչ 10 մետր խորութիւն, 3 կամ 4 մետր տրամագծով։ Այդ տասը մետր փոսերն ամրացնում են քարէ չինութիւններով։ Փորելը լետոյ շարունակում են չոգէ դուրով։ Աւելի խորը գնալով, փորուածքն ամրացնում են, հորի ներսը մտցնելով մետաղեայ քառանկիւնի խողովակներ 20 սանտիմետր երկարութեամբ։ Այդ խողովակների երկար շարքով կազմուած ցիլինդրը կազմում է հէնց հորը ինքը։ Խողովակների տրամագիծը, որ սկզբում 30-ից մինչ 40 սանտիմետր է, կամաց-կամաց նուազում է, այնպէս որ իրար միջով անցնել կարողանան։ Հէնց որ հասան մի որոշ խորութեան, անպայման հարկաւոր է լինում դնել նոր խողովակ, որովհետև դա միակ միջոցն է փլչելու դէմ։ Փորելը պարզ կերպով է կատարւում. դուրը բարձրացնում են 4 կամ 5 մետր և թողնում են որ ծանր կերպով կրկին վայր ընկնի։ Երկու-երեք անգամ վերսկսում են նոյնը, լետոյ հողը դուրս են կրում և այդպէս շարունակ։

Մի հոր փորելը նստում է 18,000-ից մինչ 30,000 բուբլի։ Հարիւր սաժէն խորութիւնից աւելին ամեն մի սաժէն փորելը թանկանում է 10 բուբլիով. օրինակ, եթէ 100-երորդ սաժէնից մինչ 105-երորդը ամեն մի սաժէն նստում է 140 բուբլի, հետևեալները մինչ 110-երորդը կը նստեն ամեն մի սաժէնը 150 բուբլի։ Վեց ամիս է քաշում 250-ից մինչ 300

70	160	»	210	»	10,000	700,000	»
37	210	»	230	»	10,260	380,000	»
28	230	»	255	»	13,000	367,768	»
23	255	»	270	»	26,300	605,000	»
8	270	»	285	»	12,500	100,000	»
9	285	»	305	»	14,000	130,000	»
2	305	»	340	»	5,000	10,000	»
1	340	»	345	»	1,216	1,216	»
					Ընդամենը. . .	2,780,000	տոն։

[1]) Ոդի յանկարծակի փոփոխութիւնները Բաքուի շրջանում յաճախ ուշադրութիւն ընդարձակումն են յառաջ բերում խողովակների մէջ։ Սովորական ընդարձակումն է 1 տոնաչափի 1,400-ի վրայ։

մեծ խորութեամբ հոր փորելը մի մեքենայով 14 անգլիական ձիերի ոյժով և մի դուրով 800—900 կիլոգրամ (50—58 պուդ) ծանրութեամբ։ Դինամիտը դեռ գործածութեան մէջ չէ, որպէս Ամերիկայում՝ մի անգամ արդէն սպառուած հորը նորոգելու համար։ Այդ ամերիկական գնդապետ Ռոբէրտսն էր որ 1862 թուականին առաջին անգամ միտք լղացաւ հին և նոր աղբիւրների մէջտեղ ընկած ժայռոտ գետինը դինամիտով փչրել։

(կը շարունակուի)